



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾԵՐԵԾՅԱՆԻՆ
ԱՐՔԻԵՔՍԱՆ ՊԱՏԻՎ ԾՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԷՃԵԱՆԻՆ
ԲԱՐԵՋԱՆ ՔԱՐՈՋԻՉԻՆ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱՇՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պէյրուս

Քարին Աստուած Իր լուսապսակ հովանիին տակ ջէն ու պայծառ կը պա-
հէ մեր եկեղեցիները, որոնք մշտապէս Սուրբ Հոգւոյ կենարար շնորհները կը
բաշխեն իրենց սուրբ Սեղաններէն մեր հաւատացեալ ժողովուրդին ի Հայաս-
տան և ի սփիւռս աշխարհի:

Մենք հոգեպէս մխթաբարուած ենք, որ մեր եկեղեցիները, հայ հաւատա-
ցեալ ժողովուրդի ծոցին մէջ իրենց այս առաքելութիւնը ի կատար կ'ածեն,
մանաւանդ նուիրեալ հոգեջէն վերատեսչութեանը ներքև մեր բարձրաստիճան
եկեղեցական սպասաւորներուն:

Սիրելի Սրբապան, Դուք ևս կը պատկանիք մեր եկեղեցւոյ նուիրեալնե-
րու հոյլին, շուրջ կեսդարեայ Չեր եկեղեցանուէր ու մանկավարժական կրթա-
կան գործունէութեամբ, մշտանորոգ եռանդով և անվարան հաւատարմութեամբ
Մայր Աթոռիս հանդէպ, գնահատուած և սիրուած տեղւոյդ Սուրբ Գէորգ եկե-
ղեցւոյ համայնքի, ինչպէս և համայն մեր հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Արդ, Ձեր ծննդեան եօթնամյակամեակի առթիւ, ջերմապէս գնահատելով բազում տարիներու Ձերդ Սրբազնութեան հոգեշէն ու ազգանուէր ծառայութիւնները, այլև ընդառաջելով Սուրբ Գեորգ եկեղեցւոյ յարգարժան թաղականութեան խնդրանքին, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը ջնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, սրտեռանդ աղօթքով, որ Տէրը Ձեզի ջնորհէ ևս բազում տարիներ քաջամողջութեամբ, շարունակելու համար Ձեր առաքելութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, Ձեզի յատուկ խանդավառ սըրտով և ոգեշնչումով:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, վօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13): Ամէն:

Կարգիս

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 29 Յունուարի
1985 Փրկչական ամի,
եւ ի տունարիս Հայոց ՌՆԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1342

